

## Տ Ե Լ Ո Յ Ա Գ Ի Ր

**Ս. ՄԱՀԱՆ, Եւ Ս. ՄԵԽՐՈՊ ՎՐԺ. ի**

**• Երջան՝ Փետր. 67. • Յունուար 68.**

**Թօրօնթօնայ գաղութիս Ս. Մահակ Ս. Մեխրոպ վարժարանի խնամակալութեան, տնօրէնութեան, ուսուցչական կազմին Եւ աշակերտութեան գործունէութիւնը, կրթական, բարոյական Եւ նիւթական մարզերու մէջ կարելի է ամֆոնել նետեւեալ ծեւով:**

**ա Խնամակալութիւն. Կարժարանիս խնամակալ մարմինը ունի իր հետեւեալ կազմը:**

**Ատենապետ՝ Պրն. Ճ. Պէյլէրեան**

**Ատենադպիր՝ Պրն. Ա. Գալայնեան**

**Գանձապահ՝ Օր. Ս. Պալավաննեան**

**Անդամներ՝ Պրն. Պ. Չիլինկիրեան**

**Պրն. Գ. Գոլովնան**

**Պրն. Տ. Ղազարեան**

**Պրն. Գ. Կիւլեան**

**Եօթերորդ անդամ հանդիսացող Պրն. Գ. Կիւլեան փոխարքինած է նախորդ անդամ Պրն. Ա. Յակոբեանը որ իր բազմազբաղութեան պատճառավ հրաժարած էր իր պաշտօնէն:**

**Խնամակալութիւնս մինչեւ Յունիս 1967 վարժարանիս ջնկման գումարեց իր սովորական ժողովները թիւով մօտ 20 ջանալով լուծել դպրոցիս զանազան կարիքները և ի մասնաւորի ջանալով ապահովել հաստատ, մաս յուն եկամուտ մը որուն պակասը զգալի էր տարիներէ ի վեր. Այս առթիւ երկար աշխատանքներէ վերջ, առաջին անգամ ըլլալով 1967 ի տարեշրջանի մկայականաց բաշխման հանդէսի ընթացքին պարզած է դպրոցական միութեան մը կազմութեան կամ վերակազմութեան մես բացա տրութիւն 1. անհրաժեշտութիւնը ու անկէ ակնկալութիւ օգուտները. թէեւ գաղութիւն առաջին ցուցաբերութիւնը այս ուղղութեամբ եղած է խիստ վերապահ, չըսձեւու համար յուսանատեցուցիչ, սակայն աստիճանա բար իր մասնակցութիւնը եղած է յուսադրիչ. Ամառնային շրջանին եւս կառագելով այս ծրագրին, խնամակալութիւնը ջանաց թէ Թօրօնթօյի եւ թէ մերձակայ քաղաքներու հայ ազգայիններու անդամակցութիւնը ապահովել. իր հետեւանը այս բոլորին դպրոցակար միութեան ներկայ վիճակը, հետեւեալն է.**

**Հիմնադիր անդամ: 10**

**Բարերար անդամ: 2**

**Անդամ: 74**

**Գումար : 88**

**Դպրոցակար միութեան անդամներուն կողմէ եղած խոստումներէն դպրոցս այժմ կը ստանայ տարեկան 2200 ի գումար մը որ թէեւ հեռու է ծախսները հաւասարելէ, սակայն իր մնայուն Եւ հաստատ գումար մը որ տակաւին իր աճումին մէջ կը գտնուի, մեծ յոյս կը ներշնչէ մեր բոլորիս.**

**1966-1967 դպրոցակար միութեան անդամական կազման, խնամակալութիւնը որոշեց իր ուսուցչական կազմին յայտնել իր երախտագիտութիւնը նիւթական շատ փոքր, անունանական նուէրներով որոնք իր գաղաքար տարբեր հանգամանք մը տուին սովորական դարձած բարոյական վարժարութեանց. 1968ի Ամանորի առթիւ եւս խնամակալութիւնը իւրաքանչիւր ուսուցիչի նուիրեց ինքնանոս գրիչ մը փորագրուած իր անուանատար բերով.**

1967 1968 դպրոցային տարեշրջանի. կարեւոր որոշումներէն մէկը նաեւ եղաւ, մանկապարտէզի Յ դասարաններու Հայ Աւետարանական Ծնկե ղեցւոյ սրահի փոքաղըութիւնը. Արդարեւ այս ձեռով սրահի անբաւարա րութեան հարցը գոնէ աստիճան մը. հարթուած եղաւ եւ թէ իբր հատեւանց դասաւանդութիւնները սկսան աւելի արդիւնաբեր ըլլալ. հիշպէս անցնալ տարի այս տարի եւս դպրոցիս զոյզ սրահներուն մաք- րութեան հօգատարութիւնը յանձնուած է երկու պարոններու որոնք ի- րենց կարելին կ ընծն թէ՝ սրահներու հարթարման մէջ եւ թէ աշակեր- տութիւնը սրահներէն ներս պահելու յոյժ կարեւոր գործին մէջ.

ինչպէս նախորդ տարի հերուն, այս տարի եւս դպրոցիս անօրէնութեանը պաշտօնը արժանավայել ծեւով ստանձնուածէ Տիկ. Տ. Արթիսեանը կողմէ. Ենորհիւ իր փորձառութեան եւ ջանքերուն կարելին կ ընէ լաւագոյնը տալ աշակերտութեան եւ նաեւ ստեղծել համերաշխ գործակցութեան ոգի մը դպրոցէն ներս եւ ուսուցչաց կազմին միջեւ որ հետեւ եաւն է.

Ա. Դասարան: Տիկ. Պ. Զի ինկիրեան

Ա. Ղասարան։ Օր. է. Հասրընեան

Բ. Դասարան : Օր. Մ. Դանիել Եւ

4. Դասարան: Տիկ. Ա., Հացունի

Դ. Դասարան : Պրն. Մ. Պուլղուրեան

6. Իասարան : ՊԿ. 8. Երեցեան

Սայազարքաստական, Ա. Տիկ. Ա. Գասարջեան  
Հայաստանական, թ. Տիկ. Ա. Մելքոն

Սաքազատրաստական Ի. Տիկ. Ա. Մերաս Պահապահ ուղարկելու մեջ նկառության

Մանկապարտէզը բախտաւոր պէտք է նկատել որ երկրորդ տարին ըլլալով կ առաջնորդուի, չործառութեւ ջանասէր մանկապարտէզպանուի հի Տիկ. Աղաւնի Գարակէօգեանի Կողմէ իր հետ ունենալով Կետեւեալ ուսուցչական նագմը:

Կոկոն: Տիկ. Ա. Չուլյան

Ճաղիկ: Op. U. Խունկանեան

• ծաղիկ։ Օր. Ա. Խունկանեան

օգնական ուսուցիչներ։ Օր. Ա. Փափազեան

Op. Ա. Գասմարճեա

Յոյժքաշալերելի է այն պարագան, թէ մանկապարտէզի մէջ ունինք երկու դարմ եւ նոր ոյժը յանձինս. Օր. Ա. Գասարծեանի եւ Օր. Ա. Փաջաց եանի որոնք հազիւ վկայուած Ս. Սահակ Ս. Մեսրոպ վարժարանէն փափաքը եւ պատրաստակամութիւնը ցոյց են տուած ծառայելու իրենց դպրոցըն.

Աշակերտութիւն

Աշակերտության ներկայ թիվ՝ 124 է ու բառապահները բաժնուած

Են հետեւեալ ձեւով։

## Մանկապարտէզ.

Կոնոն ռասառան : 14

δωρήκ η πασαριάν : 22

anLump 36

## Նախակղթարան.

Նախապատրաստական	Ա.:	14
Նախապատրամուպական	Բ.:	18
Ա. Դասարան	:	9
Ա. Դասարան	:	9
Բ. Դասարան	:	14
Գ. Դասարան	:	11
Դ. Դասարան	:	9
Ե. Դասարան	:	9

գումար 88

Ընդհանուր գումար: 124

Վարժարանիս դասաւանդութիւնները տեղի կունենան ամէն շաբաթ առաւօտ ժամը 10:00էն մինչեւ 1:00.

Կը դասաւանդուին չայ Լեզուն, չայ Երգը եւ Ազգ։ Պատմութիւնը.

Աշակերտութեան չոփաղրութիւնը կը կատարի մեծ մասամբ վարձու ինքնաշարժերով թիւով 8 եւ մասամբ ալ աշակերտները կ երթեւեկն հանրային միջոցներով.

## Զանազան :

Ծնորհիւ դպրոցիս վերաբերեալ պատրաստուած գրքոյին որ դրկուած է Թօրօնթօնայ ամէն տուն եւ նաեւ այլուր ապրող շատ մը հայերու, ինչպէս նաեւ դպրոցէս ներս կատարուած շատ մը այցելութիւններուն, օրինակ Ամերիկանայոց առաջնորդ՝ S.S. Թորգոմ Եպիսկոպոս Սանուկեան, Առաջնորդական վոյչանորդ Վազգէն Եպիսկոպոս Գրպրըսլեան. գաղութիս Ս.Սահակ Ս.Մեսրոպ վարժարանի վարկը ու համբաւը օր ըստ օրէ կանի ու կը մեծնայ եւ շատ մը մարզերու մէջ կը գործածուի իբր նմոյշ մեր ծակայ նմանօրինակ դպրոցներու մէջ.

Խնամակալութիւնս, որ գնահատելի հովանաւորութիւնը կը վայելէ Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ պատուարժան ծխական Խորհուրդին, տնօրէն նութեան եւ ուսուցչական կազմին հետ, կատարեալ միաձայնութեամբ ու համերաշն ոգիով կը ջանայ կարելին ընել իրեն Վստահուած յոյժ կարեւոր գործին մէջ ու մասնաւոր շնորհակալութիւնն ու գնահատանքը կուզեւողել ընդհանուր Թօրօնթօնայութեան որ օր ըստ օրէ աւելի լաւ կերպով կը գիտնայ հոգալ, նիւթապէս թէ բարոյապէս, իբ դպրոցը որուն դէրը չայապահանման մէջ եզական է ու անփոխարինելի. Խնամակալութիւնը Վստահն է թէ, ապագային, դպրոցասիրաց միութեան ուղղութեամբ ցարդ անպատասխանի ծգուած իր հրաւերները, պիտի պատասխանուին ու այսպէսով դպրոցին հաստատ մնայուն Եկամուտը պիտի մոտենայ իբ ծախսերու մակարդակին առիթ տալով որ ինամակալութիւնը կարողանայ կերպնացնել իբ աշխատանքները դպրոցիս վերելքին աւելի կենսական հարցերու մէջ.

Բացատրութիւն թիւ 1. Թէեւ նախապէս կազմուած է դպրոցասիրաց միութիւն մը ու նոյնիսկ անուանացանկ մըն ալ անցած մեր ծեռքին՝ սակայն Ենթադրացար եղած ինստումներու յատուկ ոեւէ վաստավուղիթի չգոյութեան պատճառաւ, անօգուտ նկատուած է գործածել սոյն անուանացանկը.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵԾԼՈՅ ԱԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՇՐՋԱՆ՝ ՓԵՄ. 1967 — ՑՈՒՆՈՒԱՐ. 1968

Ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս ինամակալութեամս հոգա...  
տարութեան յանձնուած է նաեւ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵԾԼՈՅ ԱԻՐԱԿՆԹԵՐ...  
եայ վարժարանի գործունէութիւնը.

Ցաւալի պարագայ մը՝ դպրոցիս հանդէպ հայ ծնողներու անքաւա՞ր  
րար հետազօքը ութիւնն ու երթեւեկութեան անկազմակերպութեան որուն  
միակ պատճառը կարելի է նկատել նիւթական միջոցներու անքաւարու-  
թեան պատճառ նղած են որ այս տարի եւս աշակերտութեան թիւը ըլլայ  
շատ սակաւ.

Վարժարանիս դասաւանդութիւնները կը կատարուին ամէն նիրակի  
առաւօտ ժամը 11:00էն մինչեւ 12:00. գլխաւորութեամբ Տիկ. Ա. Գարա  
կէօզեանի եւ գործակցութեամբ Պրոք. Ժ. Նահապետեանի եւ Ս. Պահուտ  
եանի.

Ա ուսուցանուի Քրիստոնէական պատմութիւն եւ երջեմն առիթնե  
րով ալ կը նկունդուի Ս. Պատարագի երգեցողութիւնները.

Աշակերտութեան թիւը միջին հաշւով 26 է.  
Այս առջիւ մեր մասնաւոր շնորհակալութիւնը կ ուղղենք Հայր  
Ժ. Թաշճեան Վարդապետին որ հոգատարութեան տակ կը գտնուի վարժարա  
նիս.

## ՀՈՎՈՒԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1967

### ԺԻՌԱՅՐ ՎՐԴ. ԹԱՇԾՆԱԽ

Սիրելի Անդամներ ծխական ժողովի,

Հայաստանեայց Առաքելական Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ծուխի Տարեկան ծխական ժողովին սիրով կ'ողջունենք Ձեզ, յանուն Ամերիկահայ և եւ Գանատահայ Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Նպս. Մանուկեանի:

Գոհունակութեամբ կուզանք արձանագրելու թէ Առաջնորդ Ս. Հօրիմաստուն կարգադրութեամբ եւ Թեմական Պատգամաւորական ժողովի որոշումով Գանատահայ Թեմը ունեցաւ իր առաջին Առաջնորդական Փոխանորդը յանձին Գերշ. Տ. Վաչէ Ս. Նպս. Յովսէփեանին, որուն երկար եւ բերդմնաւոր տարիներու ծառայութիւնը Ամերիկահայ թեմէն ներս եւ իր կազմակերպչական գործունեայ կարողութիւնները նոր եռանդ եւ աւոյն պիտի տան հետզհետէ աճող եւ բազմապատկուղոյ Գանատահայ զաղութներուն:

Ուրախ ենք որ Փոխանորդ Ս. Հայրը արդէն իսկ ստանձնած է իր առաքելութեան, եւ կանոնաւոր այցելութիւններով կը ջանայ բերել իանդապառութիւնը մեր աւանդապահ զգացումներուն:

Անցնող տարին բոլորիս համար եղաւ յաւէտ յիշատակելի տարի մը, տօնախմբութեամբը բոլորիս որդեգրած Գանատական հայրենիքի Սահմանադրութեան Հարիւրամեակին: Երկիր մը որ կրցեր է այսքան կարծ ժամանակուան մէջ իր մէջ համախմբել ժողովուրդներու ազնիւ որակը, անոնց տալով ամէն ազատութիւն ցեղային եւ կրօնական գոյութիւնը պահելու, արժանի է ամէն բանէ առաջ այս տեսակ հանդիսաւոր առիթներուն մեր անկեղծ երախտագիտութեան եւ հաւատարմութեան լաւագոյն զգացումներուն, եւ մանաւանդ հանդէպ բոլոր անոնց, որոնք մեր այսօրուան գոյութեան ուահվիրաններն հանդիսացան տասնամեակներու ընթացքին: Վասնգի այս խաղաղ եւ ապահով երկրին մէջ շղաղրեցաւ երբեք հայուն ժամն ու Ալէլուն, որովհետեւ գիտցանք սիրով եւ գոհողութեան ոգիով միշտ վառ պահել հայուն գոյութեան ԲԱՐՁՐ ԲԾՐԴԸ եղող իր Եկեղեցին:

Համաձայն մեր վրայ դրուած պաշտօնին եւ պարտաւորութեանց ամէն Կիրակի եւ Տօնական օրերուն, ժամապաշտութիւն տեղի ունեցաւ եւ տրուեցաւ յաւուր պատշաճի պատգամ:

1967 տարուան ընթացքին կատարած ենք 26 Մկրտութիւններ, 14 Ամուսնութիւններ, եւ 8 ննջեցեալներու թաղման արարողութիւններ:

Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան Տօներուն առիթով տուած ենք կանոնաւոր Տնօրինէքի այցելութիւններ 134 ընտանիքներուն, եւ օրինած ենք անոնց ընտանեկան աղն ու հացը:

Երախտագիտութեան խօսք ունինք 1967 տարուան պատուարժան ծխական Խորհուրդին եւ անոր արժանաւոր Ալենապետ Տիար Հայկ Սէլեանին, որոնք իրենց կարելին ըրին համերաշին եւ շինարար գործակցութեամբ երջանկութիւնը ապահովելու մեր ծուխի Ազգային եւ Եկեղեցական միասնականութեան:

Եկեղեցւոյս հովանաւորութիւնը վայելող յարակից կազմակերպութիւններ իրենց կարելի միջոցներով բոլորեցին յաջող տարի մը:

Գոհունակութեամբ կը յիշատակենք Եկեղեցւոյս անձնուեր դպիրներն ու Ուրարակիր սարկաւագները, որոնք նուիրումով եւ անսակարկ ծառայութեամբ ապահովեցին ներդաշնակ երգեցողութիւնը Եկեղեցական ժամապաշտութեանց:

Գնահատանքի արդար բաժինը կ'ուզենք տալ ծուխիս Շաբաթօրեայ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵԼ ՈՒՍՈՒցչԱԿԱՆ ԿԱՂՄԻՆ ԵԼ անոնց ԺՐԱՋԱՆ ԱռԵ-ՆԱՎԵՏ ՏԻՎԻ ԶՈՐԾ ՊԵՋԼ ԷՐԵԱՆԻՆ, որոնք կարծ ժամանակուան մէջ կրցան տալ այնքան սէր ել հոգածու նուիրում, որ արդէն իսկ սկսած հետաքրքրութիւն արթնցնել ծուխիս անդամներուն մօտ: Կ'ակնկալենք որ մեր ծուխի անդամնե-րը նոյն սէրն ու հոգածու հետաքրքրութիւնը տան նաև կիրակնօրեայ Դպրո-ցի հանդէպ, ապահովելու համար վաղուան գիտակից ել հաւատացեալ անդամնե-րը Հայ Եկեղեցւոյ: Այս ուղղութեամբ յառաջիկային յատուկ ծրագիր մը պիտի մշակուի Փոխանորդ Ս. Հօր հովանաւորութեամբ կազմակերպելու համար աւելի գործօն Կիրակնօրեայ Դպրոց մը հայ մանուկին ջամբելու հայեցի կրօնաբա-րոյական դաստիարակութիւն:

Ինչպէս գիտէք գրեթէ օր չ' անցնիր, առանց որ նոր հայ Երիտասարդ մը մերձաւոր Արեւելքէն ել Եւրոպայէն քաղաքս չժամանէ: Անոնցմէ ոմանք առանձին կու գան իրենց ապագան կերտելու համար:

Գաղութիս Սրահը Հայաստանեայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմա-կերպութեան ել վերոյիշեալ Երիտասարդներու ժամադրավայրն է: Այս Երիտա-սարդական կազմակերպութեան նպատակը պէտք է ըլլայ ընկերային գուարծալի Երեկոներու համընթաց, բարոյական ել իմացական առաջնորդութիւն տալ Գաղութահայ Երիտասարդներուն: Այս ընելու համար պէտք ունինք ծուխի իւրաքանչիւր անդամի բարեկամեցողութեան ել գործակցութեան:

1967 Մայիս ամսուն Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ գումարուեցաւ Տարեկան Թեմական ժողովը: Այս ժողովին որոշումով 1968 տարին հոչակուեցաւ ՄԱՅՐ ՏԱՅԱՐԻ ՏԱՐԻ: Բարերար մը կամ բարերարներ չեն որ շինեցին նիւ Ենորքի Մայր Տաճարը, այլ բովանդակ Ամերիկահայութիւնը իրեւ մշտնշենական կոթող մեր մեծագոյն նահատակութեան, հոն անթեղելու համար մեր տարիներու լացն ու կոծը, ել իրեւ փարոս լուսաւորելու մեր գոյութեան պայծառ հորիզոնները: Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Կազզէն Ա. Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն անձամբ Ամերիկա պիտի գայ կատարելու օծումը Մայր Տաճարին ել պսակելու Ամերիկահայութեան Երկար տարիներու մեծագոյն յաջողութիւնը:

1967 Հեկտեմբեր 2 թուականը յաւէտ անմոռանալի պիտի մնայ այս ծուխի կեանքին մէջ, երբ վեց լման տարիներ իրեւ մնայուն հովիւ ծառա-յելէ ետք Զեր իսկ վկայութեամբ արժանացանք Մասնաւոր Վարդապետութեան աստիճանին ձեռամբ Բարեխինամ Առաջնորդ Սրբազն Հօր: Նախ Աստուծոյ շնորհակալ եմ այս թանկագին առիթին համար, ապա կը գնահատեմ բոլոր անոնց որոնք գիտցան ըստ արժանաւոյն պատուել Հայ Եկեղեցւոյ տրուպ սպասաւորս իրենց գեղեցիկ ել անակնկալ նուէրներով ել բարոյական քաջալ Երանքներով:

Շնորհիւ ծխական նորհուրդի խոհեմ, շրջահայեաց ել մանաւանդ գիտա-կից առաջնորդութեան, ծուխէս ներս կը տիրէ ներդաշնակ անդորրութիւն մը, որու շնորհիւ ստեղծուած է նոր եռանդ ել խանդավառութիւն, առաւել եւս կազմակերպեալ ել ծրագրեալ ձեւով յառաջ տանելու մեր ծխական գործերը:

Վստահ ենք որ նոր Եխական նորհուրդը առաջնորդուած տիրող ոգիէն, պիտի կարենայ նոր ծրագիրներով ել նոր խանդով օգտակար հանդիսանալ համայնքիս:

Կը մաղթենք որ մեր հայրերուն Աստուածը իր հովանին անպակաս ընէ Ս. Երրորդութիւն Հայաստանեայ Առաքելական Եկեղեցւոյ ծուխի անդամներուն վրայէն, ել բոլորին շնորհէ առողջութիւն հոգիի ել մարմինի, միշտ այսպէս գործակցաքար ել առաւել սիրով լծուելու շինարար աշխատանքի, ի պայ ծառութիւն մեր Ս. Եկեղեցւոյ ել ի բարգաւաճումբ մեր ժողովուրդին:

Աստուած մեզ օգնական

Սիրոյ ողջունիւ ել Օրհնութեամբ  
Աղօթարար

Ժիրայր Վրդ. Թաշնեան, Հովիւ

## ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

1967 Տարուան ընթացքին շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ ընդունեցանք հետեւեալ բարեպաշտական նուէրները վասն պայծառութեան եկեղեցւոյս:

1. ԱՍՏՈՒԱԺԱՄՈՐ ԻԻՂԱՆԵՐԿ ՊԱՏԿԵՐ ՄԸ ՇՐՋԱՆԱԿՈՎ  
նուէրատու ժողեֆ Աշոտեան, ի յիշատակ իր Ողբացեալ Մօր:
2. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼԽԱՀՈՐ ՄՈՒՏՔԻՆ ԵՐԿՈՒ ԼԵԶՈՒՆԱՆ ՑՈՒՑԱՏԱԽԱԿԱՆԵՐ  
նուէրատու Սեղրակ Ատուրեան, Գործ՝ Պետրոս Գոգորեան:
3. ՊՈՀԵՄԵԱՆ ՔՐԻՍԹԱԼ ՀՈՒՍԱՎԱՌ ՃԱՀ ՄԸ  
նուէրատու Արգումանեան Հնտանիք, ի յիշատակ իրենց Ողբացեալ Հօր:
4. ԱՐԺԱԹԵԱՅ ԶՈՅԴ ՄԸ ԳԵՂԵՑԻԿ ԲՈԺՈԺԱՀՈՐ ՔՇՈՑՆԵՐ  
նուէրատու՝ Տէր եւ Տիկին Գեղամ Մարգարեանէ
5. ՊԱՏԻ ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՑՈՅՑ ՄԸ  
նուէրատու՝ Տիկին Աննա Բարաղամեան եւ Հնտանիք:
6. ՍԿԻ ՀԻ ՍՈԿԵԹԵԼ ԾԱԾԿՈՑ ՄԸ  
նուէրատու՝ եւ Գործ Տիար Երուանդ Թըրքըրեանի:

## ԱՅՑԵԼՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱԱՆՆԵՐ

1. 1967 ՑՈՒՆՈՒԱՐ 5-8, Ս. ՃՆՆԴԵԱՆ Տօնին առիթով  
Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Եպս. Մանուկեան
2. Փետրուար 24-26, Շաբաթավերջի Կրօնագիտական Դասընթացքին առիթով  
Հոգշ. Տ. Տ. Մեսրոպ եւ Եղիշէ ծ. Վրդ. Ներ եւ Ցովհաննէս Սրկ. Գասպարեան
3. ՑՈՒՆԻՍ 4, Հայ Դպրոցի Ամավերջի հանդէսին առիթով  
Առաջն. Փոխանորդ Հոգշ. Տ. Վազգէն ծ. Վրդ. Գպրըսլեան
4. ՑՈՒՆԻՍ 18, Արժ. Տ. Լեւոն Քհնյ. Առաքելեան
5. ՑՈՒԼԻՍ 23, Արժ. Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան, Հովիւներու փոխանակում
6. Օգոստոս 27, Հոգշ. Տ. Վահրիծ Աբեղայ Գազանծեան, հսթ Ս. Լուիզէն, հլլ.
7. Կետեմբեր 1--3, Եկեղեցւոյս 14-րդ Տարեղարձին առիթով  
Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Եպս. Մանուկեան

## ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

1967 Տարուան ընթացքին շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ ընդունեցանք հետեւեալ բարեպաշտական նուէրները վասն պայծառութեան եկեղեցւոյս:

### 1. ԱՍՏՈՒԱԺԱՄՈՐ ԻԻՂԱՆԵՐԿ ՊԱՏԿԵՐ ՄԸ ՇՐՋԱՆԱԿՈՎ

Նուիրատու ժողէֆ Աշոտեան, ի յիշատակ իր Ողբացեալ Մօր:

### 2. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԼԽԱՀՈՐ ՄՈՒՏՔԻՆ ԵՐԿՈՒ ԼԵԶՈՒԽԱՆ ՑՈՒՑԱՏԱԽԱԿՆԵՐ

Նուիրատու Սեղրակ Առուրեան; Գործ՝ Պետրոս Գոգորեան:

### 3. ՊՈՀԵՄԵՆԱՆ ՔՐԻՍԹՈՎ ՀՈՒՍՎԱՌ ՃԱՀ ՄԸ

Նուիրատու Արզումանեան Ընտանիք, ի յիշատակ իրենց Ողբացեալ Հօր:

### 4. ԱՐԺԱԹԵԱՅ ԶՈՅԴ ՄԸ ԳԵՂԵՑԻՆ ԲՈՃՈԺԱՀՈՐ ՔՇՈՑՆԵՐ

Նուիրատու՝ Տէր եւ Տիկին Գեղամ Մարգարեանէ

### 5. ՊԱՏԻ ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՑՈՅՑ ՄԸ

Նուիրատու՝ Տիկին Աննա Բարաղամեան եւ Ընտանիք:

### 6. ՍԿԻ ՀԻ ՍՈԿԵԹԵԼ ԾԱԾԿՈՑ ՄԸ

Նուիրատու՝ Գործ Տիար Երուանդ Թըրքըրեանի:

## ԱՅՑԵԼՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

1. 1967 ՑՈՒՆՈՒԱՐ 5-8; Ս. ՃՆՆԴԵԱՆ Տօնին առիթով  
Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Եպս. Մանուկեան
2. Փետրուար 24-26, Շաքաթավերջի Կրօնագիտական Դասընթացքին առիթով  
Հոգշ. Տ. Տ. Մեսրոպ եւ Եղիշէ ծ. Վրդ. Ներ եւ Ցովհաննէս Սրկ. Գասպարեան
3. Ցունիս 4, Հայ Դպրոցի Ամավերջի հանդէսին առիթով  
Առաջն. Փոխանորդ Հոգշ. Տ. Վազգէն ծ. Վրդ. Գպրըսլեան
4. Ցունիս 18, Արժ. Տ. Լեւոն Քհնյ. Առաքելեան
5. Ցուլիս 23, Արժ. Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան, հովիւներու փոխանակում
6. Օգոստոս 27, Հոգշ. Տ. Վահրիճ Արեղայ Գազանճեան, հսթ Ս. Լուիզէն, հլլ.
7. Խեկտեմբեր 1-3, Եկեղեցւոյս 14-րդ Տարեղարձին առիթով  
Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Եպս. Մանուկեան